

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Крѳутиѳн» (образование) еженедельник 03.03.2021թ. չորեքշաբթի թիվ 10 (983)

Ներուժ

Վերջին տարիներին հայկական կամ հայաստանյան **գիտության** զարգացման խնդիրները դարձել են հասարակական լայն քննարկման քեմաներ: Բայց որքան հրատապ է դիտվում մեզանում գիտության զարգացմանը ըստ ամենայնի **նպաստելու** անհրաժեշտությունը, նույնքան էլ, կարծես թե, հետաձգվում են **կազմակերպական** գործնական քայլերը (բացառյալ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, ուրում վերջին տարիներին ապահովել ենք հսկայական դրական տեղաշարժեր)... Բնավ նկատի չունենք միայն այն, ինչը կարող են անել **Կառավարությունը, Նախարարությունը, Ակադեմիան...** Գիտությունը համաժողովրդական սիրո կարիքն ունի, ինչպես հոգեւոր գործունեության մյուս ոլորտները եւս: Հասարակությունը պիտի գիտակցի, որ **շուկայական հարաբերություններում** (իսկ, ուզենք, թե չուզենք, աշխարհն առայժմ զարգանում է ըստ դրանց) մրցունակ լինելու համար պիտի **ներդնել համապատասխան կապիտալ** եւ ունենալ **համապատասխան ապրանք**: Որքան էլ օտարները ներդրումներ կատարեն (իսկ դրանք «ձեռքի հետ») ֆինանսական խնդիրներ լուծելուց բացի՝ քողարկված, երբեմն էլ բացահայտ քաղաքական շահեր են հետապնդում) եւ, առաջին հայացքից, նպաստեն աշխատատեղեր ապահովելու եւ տնտեսական ինչ-ինչ աշխուժացում առաջացնելու գործին, միեւնույնն է, **երկրի տնտեսությունը** կարող է զարգանալ միայն **երկրի արտադրանքով... Մրցունակ արտադրություններ** հիմնելու եւ զարգացնելու համար մրցունակ **տեխնոլոգիաներ** են հարկավոր. ասել է թե՛ **գիտատեխնիկական մտքի վերելք...** Մեր իսկ տնտեսության մեջ **մեր ներդրումը** ինչ-ինչ հիմնական կապիտալը պիտի լինի մեր **գիտական ներուժը**, եւ մեր մրցունակ ապրանքը՝ **մեր գիտական մտքի արդյունքը** կամ նրա շնորհիվ ստեղծվածը:



Պատկերացրեք մի պահ, որ Հայաստանն ունի **Թելուսյանի** պես նախարար (խորհրդային մետալուրգիան զարգացավ նրա շնորհիվ), **Միկոյանի** պես ինքնաթիռաշինարար (ավելի լավ ռազմական օդանավեր, քան նրա ստեղծածները, Ռուսաստանը դեռ երկար տարիներ թերեւս չկարողանա ունենալ), **Ալիխանյան** եղբայների պես ֆիզիկոսներ (ու դեռ քա՛նի-քա՛նի հայազգի գիտնականների՝ ռուսական լաբորատորիաներում կատարած աշխատանքները դեռեւս մնում են չգաղտնագրծված), որոնց մտքի արգասիքը ծառայում է սեփական երկրին... Եթե համատարած վախի պայմաններում հայ գիտական միտքը այդչափ պտուղներ է տվել, ապա որքան ավելի կարող է ծաղկել անկախությունը վերականգնած Հայրենիքում... Այստեղ չնռանանք նշել նաեւ աշխարհի գրեթե բոլոր երկրներում այսօր գործող աշխարհահռչակ բազմաթիվ հայ գիտնականներին...

Մնում է միայն, որ Հայրենիքը կարողանա անհրաժեշտ **ոգելությունը** եւ **բարոյական մթնոլորտը** ապահովել: Ժամանակը չէ՞, որ մեր գործարարները ներդրումներ կատարեն ոչ թե այս կամ այն սրճարանը, խաղատունը, վաճառատնիքը, հյուրանոցը կառուցելու (որոնցից ակնկալում են արագ փոխհատուցվող եկամուտներ), այլ գիտատեխնիկական որեւէ լաբորատորիա, որեւէ մի փորձ կամ փորձարկում ֆինանսավորելու ուղղությամբ... Այս դեպքում նրանց ներդրումները կփոխհատուցվեն ոչ անմիջապես, այլ՝ ժամանակ անց, սակայն կապահովեն տասնապատիկ եկամուտներ, եւ տասնապատիկ կիզորանա երկիրը... Սա ռոմանտիկա չէ, ոչ էլ սոսկ երեւակայություն, նույնքան իրական է, որքան այն փաստը, որ **տեղեկատվական տեխնոլոգիաների** համաշխարհային պատմության մեջ շուրջ **500** կարեւորագույն հայտնագործություն ու նորամուծություն կատարել են հա՛յ գիտնականները... Ընթերցողը կարող է մտաբերել տասնյակ, հարյուրավոր հին ու նոր այլ փաստեր...

Մեզանում գիտությունը հրաշքներ կարող է գործել, ճիշտ այնպես, ինչպես որ հայ գիտնականները հրաշքներ են գործել բոլոր ժամանակներում: Միայն թե կրկին պետք է **սիրել** գիտությունը եւ գիտնականին, այնպես, ինչպես սիրում էինք **Վիկտոր Համբարձումյանին** եւ մյուսներին. ազգովի: Գիտությունը կարող է ծաղկել նաեւ առանց հսկայական ֆինանսական ներդրումների: Դրանք անհրաժեշտ, բայց ոչ միակ պարտադիր պայմաններն են: Գիտությունը դյուրությամբ է ծաղկում, երբ արմատակալում է դպրոցում... **Աշակերտական գիտությունը**, գիտության նկատմամբ **աշակերտական սերը եւ հետաքրքրասիրությունը** լավագույն ներդրումները կարող են լինել գիտության զարգացման համար: **Մեկ ուսուցիչը կարող է բարոյապես ծնել տասնյակ գիտնականի:** Գիտությունը կրկին պետք է մտնի դպրոց ու բուհ: Ու գիտական խոշորագույն հայտնագործությունները, թեւ դեռես երազանքի տեսքով, պիտի հղացվեն հենց աշակերտական նստարանին: Գիտությունը՝ դպրոցով, դպրոցը գիտությամբ պիտի կրկին ձեռք բերեն այն որակները, որ ունեցել ենք, որ կարող ենք ունենալ, որ արժանի ենք ունենալու:

Գ. Մ.

Օրենսդրական

«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» օրենքի նորամուծությունները

Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունել է «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» օրենքը: Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը երկրորդ ընթերցմամբ քննարկել է դրական եզրակացություն է տվել օրենքի նախագծին եւ կից օրենսդրական փաթեթին: Այն հանձնաժողովի դրական եզրակացությամբ կընդգրկվի Աժ առաջիկա հերթական նիստերի օրակարգի նախագծում:

Հարունակությունը՝ էջ 2

Տարվա լավագույնները

Պարգևատրվել են շնորհակալագրերով եւ համակարգիչներով

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն այս տարի առաջին անգամ անցկացրել է «Տարվա լավագույնները» մրցույթը, որի արդյունքում հաղթող ճանաչված մանկավարժները պարգևատրվել են դյուրակիր համակարգիչներով եւ շնորհակալագրերով:

Հարունակությունը՝ էջ 3

Հանրային քննարկում

Ներկայացվել է ՆԶՊ առարկայական չափորոշիչը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Նախնական գինվորական պատրաստություն» առարկայի 8-12-րդ դասարանների չափորոշիչի նախագիծը: Չափորոշիչում կատարված որակական փոփոխությունները պայմանավորված են ինչպես ռազմագիտության ոլորտում տեղի ունեցած զարգացումներով, համաշխարհային եւ տարածաշրջանային իրավիճակով, այնպես էլ ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման ձեւով՝ անհատականից դեպի խմբային (ջոկային) պատրաստվածություն: Նախագծում կարելու է նաեւ միջառարկայական կապերի զարգացումը եւ ուսուցողական մյուսերի պարզեցումը, ոչ պրոֆիլային թեմաներից ազատումը եւ արդիական ու կարելու թեմաների ներմուծումը, ավելի արդյունավետ մեթոդական մոտեցումների, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառումը:

Ժամանակակից պատերազմները մեծ նշանակություն են տալիս գերճշգրիտ միջոցներին, մարտական ռոբոտներին, կապի եւ տեղեկատվության ժամանակակից համակարգերին, ինֆորմացիոն-հոգեբանական միջոցառումներին:

Հարունակությունը՝ էջ 4

«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» օրենքի նորամուծությունները

սկիզբը՝ էջ 1

Ինչպես տեղեկացրել է ԳՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը**, փաթեթի՝ առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո ստացվել են առաջարկներ, որոնց մի մասն ընդունվել է: Հանդիպումներ են եղել գիտնականների, պետական բուհերի ղեկավարների հետ: Նախագծի հիմնական դրույթներն ամփոփոխ են մնացել, թեև կատարվել են որոշ սկզբունքային եւ խմբագրական փոփոխություններ: Դրանք վերաբերում են բուհերի հավատարմագրման կարգին, կառավարման խորհրդին, բուհերի ինքնավարության ավելացմանը, ղեկավարների տարիքին: Նախարարը նշել է, որ կան դրույթներ, որոնց վերաբերյալ այդպես էլ շահագրգիռ կողմերը համաձայնության չեն եկել: Դրանք ղեկավարների նշանակման, հոգաբարձուների խորհրդի ձևավորման վերաբերյալ դրույթներն են:

Խոսելով գիտության ֆինանսավորման մասին՝ հանձնաժողովի անդամ **Սոֆյա Հովսեփյանը** հարցրել է, թե Կառավարությունը նպատակադրվել է արդյոք օրենքում ամրագրել ֆինանսավորման չափը: Նախարարը պատասխանել է, որ միանշանակ, պետք է այն ավելացնել, բայց որեւէ բնագավառում օրենքի մակարդակով ցանկալի չէ որեւէ թիվ ամրագրել: «Պրակտիկայում կա, երբ ֆիքսվել է թիվ, ու չի կատարվել օրենքը: Ես ուզում եմ փարատել Ձեր կասկածները. վարչապետի մոտ երկու օր առաջ հանդիպում է եղել, եւ այդ հարցն ամենաբարձր մակարդակով քննարկվել է: Հստակ առաջադրանք է ձեւավորվել, կա ճանապարհային քարտեզ, ու կառավարությունը լիովին պատրաստ է անել հնարավոր՝ գիտության ֆինանսավորումը մեծացնելու ուղղությամբ:



Ուղղակի դա պետք է չլինի ինքնակառավարում», -ասել է Վահրամ Դումանյանը: Հարակից գեկույցում հանձնաժողովի փոխնախագահ **Հովհաննես Հովհաննիսյանն** իր հերթին նշել է, որ առաջարկները հիմնականում վերաբերել են բուհերի ղեկավարներին եւ կառավարման խորհրդին:

Ներկայացնում ենք օրենքի նախագծի հիմնական նորամուծությունները: **Անցում բարձրագույն կրթության որակավորումների եռաստիճան համակարգի բակալավր-մագիստրոս-դոկտոր:**

Ներկայիս համակարգը նախատեսում է երկաստիճան՝ բակալավր-մագիստրոս որակավորումների համակարգ: Ասպիրանտական ծրագիրը համարվում է հետբուհական, մինչդեռ Եվրամիության անդամ բոլոր 27 պետություններում այն ներդրված է որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճան, որի ավարտին ավարտին շնորհվում է դոկտորի որակավորում: Երկաստիճան համակարգից արդեն հրաժարվել են նաեւ որոշ հետխորհրդային երկրներ, այդ թվում՝ Վրաստանը, Ղազախստանը, Էստոնիան, Լատվիան, Լիտվան: Ռուսաստանի Դաշնությունում, որը նույնպես Եվրոպական բարձրագույն

կրթության տարածքի անդամ է, դարձյալ աստիճանական անցում է իրականացվում միաստիճան համակարգի. 28 առաջատար բուհերի եւ հետազոտական ինստիտուտների իրավունք է վերապահվել շնորհելու դոկտորի (PhD) գիտական աստիճան: Այս բուհերն այժմ ազատ են սահմանելու ընդունելության, խորհուրդների ձևավորման, աստիճանաշնորհման եւ այլ պահանջներ ու ավելի ճկուն մոտեցումներ:

Օրենքի նախագիծը նախատեսում է ներկայիս ասպիրանտական ծրագրերի աստիճանական փոփոխություն՝ դրանք ընդգրկելով բարձրագույն կրթության համակարգում որպես որակավորման երրորդ՝ դոկտորական աստիճան (PhD): Ըստ այդմ՝ այդ մակարդակում կրթություն կարող է իրականացնել բուհը՝ իր կազմում գործող մասնագիտական համապատասխան հաստատության հենքի վրա կամ իր կազմից դուրս գործող գիտական կազմակերպության հետ համատեղ:

Բուհերում ուսումնառության կազմակերպման անցում լրիվ կամ մասնակի բեռնվածությամբ:

Ներկայում բուհերում ուսումնառությունը իրականացվում է առկա կամ հեռա-

կա ուսուցման ձևերով: Հատկապես վերջինի առկայությունը լրջորեն ազդում է կրթության որակի եւ ուսումնառության վերջնարդյունքների արժանահավատության վրա:

Օրենքի նախագծով բարձրագույն կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել ուսանողի լրիվ կամ մասնակի բեռնվածությամբ: Սա ուսանողներին հնարավորություն կտա կարգավորել իրենց ուսումնառության ինտենսիվությունը (բեռնվածությունը)՝ պայմանավորված ընդունակություններով, զբաղվածության աստիճանով եւ ֆինանսական հնարավորություններով:

Այն նաեւ կապահովի ուսանողների ավելի լայն մասնակցությունը կրթական ծրագրերի կազմավորման գործընթացում՝ ըստ էության լրջորեն խթանելով ուսանողակետերում կրթությունը:

Համատեղ կրթական ծրագրերի իրականացման հնարավորություն:

Գործող օրենքով այդպիսի ծրագրերի իրականացման հնարավորությունները կարգավորված չեն, մինչդեռ տարբեր, այդ թվում՝ արտերկրի բուհերի հետ համատեղ կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումն ակադեմիական եւ ուսանողական կազմի շարժունության եւ բարձրագույն կրթության համակարգի միջազգայնացման, կրթության որակի բարձրացման լուրջ խթան են:

Օրենքի նախագծով նախատեսվում է, որ երկու եւ ավելի բուհեր կարող են համատեղ մշակել ու իրականացնել կրթական ծրագրեր եւ շնորհել բարձրագույն կրթության որակավորում, որը հավաստվում է մասնակից բուհերի շնորհած միասնական դիպլոմով կամ մասնակից բուհերից մեկի կամ յուրաքանչյուրի առանձին դիպլոմներով:

Յ. Յ.

Աշխարհի հետ

Աշխատանքները նախատեսված է սկսել այս գարնանից

Կյանքի շտրիխ կողավորման միջազգային կոնսորցիումի (iBOL) եւ ԳՀ կրթության կոմիտեի միջեւ 2019 թ. հուլիսին կնքված «*փոխընթացման հուշագրի*» շրջանակներում 2020 թ. փետրվարին ստորագրվել է ֆինանսական պարտավորությունների մասին պայմանագիր, որով սահմանվել են հուշագրի շրջանակներում ստանձնած պարտավորություններն ու հանձնառությունները:

Կյանքի շտրիխ կողավորման միջազգային կոնսորցիումի (iBOL) նպատակն է նկարագրել մոլորակի բոլոր կենդանի տեսակներն ըստ մոլեկուլային մարկերների (շուրջ 10 մլն տեսակ) եւ այդ տվյալները ներառել ընդհանուր տեղեկագրանում: iBOL-ի ծրագրերին մասնակցությունը հայ կենսաբաններին թույլ կտա իրականացնել հազարավոր տեսակների հետազոտություններ մոլեկուլային մակարդակում, ինչպես նաեւ ինտեգրվել համաշխարհային նշանակության գիտական աշխատանքներին: Նախագծի գիտական հանձնաժողովում Հայաստանը միաժամանակ ներկայացնում են երկու մասնագետներ՝ ԳՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադե-

միկոս-քարտուղար, ԵՊՀ գենետիկայի եւ բջջաբանության ամբիոնի վարիչ **Ռուբեն Հարությունյանը** եւ ԳՀ ԳԱԱ կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր **Բարդուղ Գաբրիելյանը**:

ԳՀ կրթության կոմիտեի եւ iBOL-ի միջեւ պայմանագրի շրջանակներում Հայաստանի մասնագետներն արդեն մասնակցում են երկու միջազգային ծրագրերի: Դրանցից մեկը Կովկասում կյանքի շտրիխ կողավորման ծրագիրն է (Caucasus Barcode of Life - CaBOL), որը ֆինանսավորում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության կրթության եւ հետազոտությունների նախարարությունը: Ծրագրում ներգրավված են Գերմանիայի, Հայաստանի, Վրաստանի մի շարք գիտական եւ կրթական հաստատություններ: Ծրագրի նպատակն է ստեղծել կենսաբանական տեսանկյան կենտրոն, որտեղ կհավաքագրվեն Կովկասի հարուստ կենսաբանական տեսակների եւ բույսերի տեսակներ եւ կստեղծվի տվյալների բազա: Ծրագրում Հայաստանից ներգրավված են Երեւանի պետական համալսարանը եւ ԳՀ ԳԱԱ կենդանաբա-

նության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը: 2020 թ.-ին կենտրոնի մասնագետները լաբորատորիայի վարիչ **Մարկ Քալաշյանը** եւ **Մարինա Դալաբյանը**, ինչպես նաեւ ԵՊՀ կենդանաբանության ամբիոնի մասնագետները, չնայած Հայաստանում տիրող ծանր իրավիճակին, իրականացրել են դաշտային աշխատանքներ, որոնց ընթացքում Հայաստանի տարբեր մարզերում հավաքագրվել են մեծ քանակով նմուշներ: Հայաստանում հավաքված նմուշների լաբորատոր մշակումն իրականացվելու է հիմնականում ԵՊՀ Կենդանաբանության ամբիոնի լաբորատորիայում՝ ամբիոնի վարիչ **Մարինե Առաքելյանի** եւ ամբիոնի աշխատակիցներ **Աստղիկ Ղազարյանի** եւ **Մարգիս Աղայանի** ղեկավարությամբ: CaBOL-ի տվյալների բազան կարելու գործիք կդառնա Հայաստանի բնության հարուստ կենսաբանականության պահպանման ուղղված հանրային միջոցառումների իրագործման համար:

Պայմանագրի շրջանակներում Հայաստանի գիտնականները մասնակցում են նաեւ Եվրոպական հետազոտական խորհրդի կողմից աջակցվող Մոլորակի

կյանքի գույքագրում ծրագրին (LIFEPLAN – A Planetary Inventory of Life), որով նախատեսվում է ժամանակակից մեթոդներով համաշխարհային մասշտաբով իրագործել կենսաբանականության ուսումնասիրություն: Ծրագրի առաջատար կազմակերպություններն են Հելսինկիի համալսարանը եւ Շվեդիայի գյուղատնտեսական համալսարանը: Վերջիններիս զլխավորությամբ ավելի քան հարյուր երկրներում ստեղծվել են աշխատանքային խմբեր:

Հայաստանում եւս ձեւավորվել է աշխատանքային խումբ՝ Մ. Քալաշյանի ղեկավարությամբ, որում ընդգրկված են Երեւանի պետական համալսարանի, ԳՀ ԳԱԱ կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի եւ ԳՀ ԳԱԱ Ա. Լ. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի մասնագետներ: Համագործակցող կողմերի միջեւ կնքվել է համաձայնագիր, եւ կազմակերպություններն ստացել են ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ժամանակակից որոշ սարքավորումներ:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ



Պարզեատրվել են շնորհակալագրերով եւ համակարգիչներով

Սոցիալական

Կեցության վարձավճարի փոխհատուցում

սկիզբը՝ էջ 1

Ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ նախարար **Վահրամ Դումանյանը** կարեւորել է հասարակության կյանքում ուսուցչի անփոխարինելի դերը: «Մենք պետք է անենք հնարավորը, որպեսզի ոչ միայն խոսքով, այլեւ գործով բոլորը հասկանան, որ ուսուցիչը գերագույն արժեք է: Խոնարհվում են բոլոր ուսուցիչների առջեւ: Չեզ նման ուսուցիչների որակը պետք է տարածվի ամբողջ հանրապետությունում. բոլորը պետք է ձգտեն նմանվել ձեզ, ունենալ այդ ձգտումը՝ լինել լավը, լինել իրական ուսուցիչ: Վստահեցնում են, որ արվում է առավելագույնը՝ ապագա սերունդներին որակյալ կրթություն փոխանցելու համար», - դիմելով ներկա ուսուցիչներին՝ նշել է նախարարը եւ նրանց մաղթել նորանոր հաջողություններ:



յան ապահովման խնդիր է դրված, եւ տեղեկատվական տեխնոլոգիաները դարձել են ամենակարեւոր գործիքը, ուսուցիչներն արդյունավետ կօգտագործեն այս պարզեւները»:

Փոխնախարարի խոսքով՝ հանձնաժողովը բաղկացած է եղել 9 անդամից, որում ընդգրկված են եղել ԿԳՄՍ նախարարություն, մանկավարժական բուհերի մասնագետներ, ուսուցչական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի 2 անդամ:

«Գնահատելիս հաշվի ենք առել ծրագրի շարունակականությունը, բյուջեն, արդյոք այն կարող է իրականացվել, թե ոչ», -ասում է հանձնաժողովի անդամ, ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդի անդամ, Զորավանդի միջնակարգ դպրոցի աշակերտ **Վահան Մարտիկյանը**:

Նշենք, որ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում ներկայացվել է 42, «Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 2, «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում՝ 7, «Նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 1, «Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 1 ծրագիր: «Նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում հաղթող է ճանաչվել 33, «Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 2, «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում՝ 5 եւ «Նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 1 ծրագիր: «Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում ներկայացված 1 ծրագրային առաջարկ չի հաղթահարել նվազագույն միավորային շեմը:

Ըստ այդմ՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում հաղթող է ճանաչվել 33, «Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 2, «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում՝ 5 եւ «Նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 1 ծրագիր: «Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում ներկայացված 1 ծրագրային առաջարկ չի հաղթահարել նվազագույն միավորային շեմը:

«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում հաղթող է ճանաչվել 33, «Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 2, «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում՝ 5 եւ «Նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 1 ծրագիր: «Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում ներկայացված 1 ծրագրային առաջարկ չի հաղթահարել նվազագույն միավորային շեմը:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հարունակությունը՝ էջ 7

Կայացավ ճյուղային հանրապետական միության 5-րդ համագումարը

Տեղի ունեցավ Հայաստանի կրթության եւ գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության 5-րդ համագումարը: Համագումարի օրակարգի գլխավոր հարցը միության խորհրդի կատարած աշխատանքների հաշվետվությունն էր, որով հանդես եկավ միության նախագահ **Գրիգոր Ղարիբյանը**:



Ճյուղային հանրապետական միության կազմի մեջ մտնում են 41 տարածքային, 3 քաղաքային միություններ, ԳԱ Ակադեմիայի միացյալ արհկոմիտեն, 14 քոլեջների եւ 205 նախադպրոցական հիմնարկների արհեստակցական կազմակերպություններ, 1282 արհեստակցական կազմակերպություն՝ 51425 արհմիության անդամներով:

Համագումարում ելույթներ ունեցան 33 ԳԱ միացյալ արհկոմիտեի նախագահի տեղակալ **Ա. Սարգսյանը**, Երեւանի թեթեւ արդյունաբերության քոլեջի արհեստակցական կազմակերպություն նախագահ **Լ. Միքայելյանը**, ճամբարակի տարածքային միության նախագահ **Ն. Ճաղարյանը**, Գորիսի տարածքային միության նախագահ **Ա. Լալաբեկյանը**, Նոր Նորքի տարածքային միության նախագահ **Ս. Մաթեոսյանը**:

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ ՀԱՄԿ - ի նախագահ **Էդուարդ Թումասյանը**, որն առանձնապես կարեւորեց միության համագործակցությունը միջազգային կառույցների հետ, նշեց կրթության ճյուղային հանրապետական միության կարեւոր դերը կոմֆերացիայի աշխատանքներում:

Համագումարը լսեց եւ հաստատեց նաեւ հանրապետական միության վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը: Հաշվետու ժամանակաշրջանում ճյուղային միության աշխատանքները գնահատվեցին բավարար: Ընդունվեց 2021-2026 թթ գործունեության ծրագիր:

Հայաստանի կրթության եւ գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ վերընտրվեց **Գրիգոր Ղարիբյանը**, փոխնախագահ՝ **Սիրանուշ Խլղաթյանը**:

Աշխարհի հետ

Յուշագրեր կրթության եւ արվեստի ոլորտների վերաբերյալ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ու Բրիտանական խորհրդի միջեւ կնքվել է փոխըմբռնման հուշագիր՝ Բրիտանական խորհրդի անգլերենի եւ կրթության ծրագրի իրականացման շրջանակում համագործակցության վերաբերյալ: Հուշագիրը ստորագրել են ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը եւ Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Արեւիկ Սարիբեկյանը:

Համագործակցության նպատակն է համակարգել Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող անգլերենի եւ կրթական ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները, որոնք նպատակ ունեն նպաստել Հայաստանի կրթության բարեփոխումներին՝ խթանելով դասավանդման եւ ուսումնառության որակի բարձրացումը:

Հուշագրի շրջանակում նախատեսվում է ՀՀ պետական դպրոցների շարունակական մասնագիտական կողմնորոշման քաղաքականության եւ շրջանակի մշակում: Բացի դրանից՝ կողմերը կիրականացնեն «Ապագա անգլերեն. ճանապարհներ դեպի գերազանցություն» ծրագիրը, որի շրջանակում Բրիտանական կրթության կոմիտեի 16 տարեկան երեխաների անգլերենի հմտությունները, անգլերենի ուսուցիչների լսարանային պրակտիկան եւ վերաբերմունքը վերլուծելու, ինչպես նաեւ հասկանալու համար, թե երկրի լեզվական քաղաքականությունը որքանով է ազդում վերոգրյալի վրա: Բրիտանական խորհուրդը կստանձնի նաեւ «Ուսուցիչների վիրտուալ աշխատանքային խմբեր (vTAG)» անվանմամբ վիրտուալ ուսուցման համայնք ստեղծելու հանձնառությունը՝ աջակցելու անգլերենի ուսուցիչներին համախոհ մասնագետների հետ կապ հաստատելու, ինչպես նաեւ ռեսուրսների հասանելիություն եւ անհատականացված առջանց ուսուցման փորձ ունենալու գործընթացներին:

Հուշագրով նախատեսված հաջորդ կետը «Անգլերենի ազդեցությունը» նախագիծն է, որի շրջանակում Բրիտանական խորհուրդը ֆինանսական աջակցություն կցուցաբերի Ավստրալիայի կրթության հետազոտությունների խորհրդի կողմից PISA մեթոդաբանության հիման վրա հետազոտության իրականացմանը:

Հուշագրով նախատեսված հաջորդ կետը «Անգլերենի ազդեցությունը» նախագիծն է, որի շրջանակում Բրիտանական խորհուրդը ֆինանսական աջակցություն կցուցաբերի Ավստրալիայի կրթության հետազոտությունների խորհրդի կողմից PISA մեթոդաբանության հիման վրա հետազոտության իրականացմանը:

«Կողմնորոշման հմտություններ. Կապակցե՞ք ներկան ապագային» նախագծի շրջանակում Բրիտանական խորհուրդը «VEON Armenia»-ի ֆինանսական օժանդակության միջոցով կփորձարկի մի ծրագիր, որի նպատակն է կողմնորոշման հմտություններ դասավանդել երեք ավագ դպրոցների աշակերտներին եւ զարգացնել քննադատական մտածողության, որոշումների կայացման, խնդիրների լուծման, ստեղծագործականության եւ համագործակցության հիմնարար հմտությունները:

Նշված գործընթացներում նախարարությունը հանձնառություն է ստանձնել աջակցել Բրիտանական խորհրդին՝ համապատասխան աշխատակիցների տրամադրման, պիլոտային ավագ դպրոցների ընտրության, ծրագրերի կայունության ապահովման եւ հետպիլոտային փուլի ընդլայնման եւ այլ ուղղություններով:

ԿԳՄՍ նախարարությունը եւ Բրիտանական խորհրդի միջեւ կնքվել է նաեւ մեկ այլ փոխըմբռնման հուշագիր՝ «Ստեղծագործական արդյունաբերության քաղաքականության երկխոսություն» ծրագրի շրջանակում համագործակցության վերաբերյալ: Ըստ այդմ՝ Բրիտանական

խորհուրդը կտրամադրի խորհրդատու, որը մշակութային ռազմավարություն մշակելու գործում կաջակցի ԿԳՄՍ նախարարությանը՝ հիմնվելով ՀՀ կառավարության, Բրիտանական խորհրդի եւ այլ գործընկերների կողմից արդեն իսկ ձեռնարկված աշխատանքների վրա: Ծրագրի արդյունքում ակնկալվում է մշակել մշակութային ռազմավարության նախագիծ՝ սահմանելով տեսլականը, հիմնական նպատակներն ու արդյունքները, ինչպես նաեւ արվեստի եւ մշակույթի ոլորտում ՀՀ կառավարության հիմնական ուղղությունները: Նախատեսվում է նաեւ Կառավարության գործողությունների ծրագրի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում՝ ռազմավարության հիմնական ուղղություններին համապատասխանեցնելու համար, միջամասնակետ ճգնաժամի կառավարման ծրագրի/ռազմավարության նախագծի ստեղծում՝ որպես հիմնական ռազմավարության հավելված, ինչպես նաեւ ժամանակակից արվեստի ոլորտում չափելի որակական արդյունքային ցուցանիշների սահմանում՝ միջազգային փորձի հիման վրա:

Յեղիճե ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Ներկայացվել է ՆՁՊ առարկայական չափորոշիչը

սկիզբը՝ էջ 1

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախում սանձազերծված պատերազմից հետո ծրագրող վերանայվել է, եւ ավելացվել են «Մոբիլ ջոկատների մասին» եւ «Աշխարհագրի եւ կամավորական ջոկատների նշանակությունը եւ դրանց համագործակցությունը կանոնավոր բանակի հետ» թեմաները: «Պայքարը հակառակորդի ցածր թռչող ինքնաթիռների դեմ» թեման համարվել է «Հակառակորդի անօդաչու թռչող սարքերի դեմ պայքարը եւ դրանցից պաշտպանվելը» ենթաթեմայով:

Ծրագրում ներմուծվել են նոր բաժիններ:

• Մարտավարաֆիզիկական պատրաստություն՝ 8-11-րդ դասարաններ (նպաստում է շարժողական ընդունակությունների, ֆիզիոլոգիական որակների ձեւավորմանը, մարմնի հավասարակշռության ապահովմանը):

• Իրավական պատրաստություն՝ 8-12-րդ դասարաններ (ապահովում է սովորողների ՀՀ ՁՈՒ կանոնադրային հիմունքների եւ միջազգային մարդասիրական իրավունքների իմացությունը):

• Ինժեներական պատրաստություն՝ 9-11-րդ դասարաններ (ապահովում է անհատական պաշտպանական կառույցների, պատերազմից հետո մնացած եւ չպայթած զինմթերքի հետ վարվելու կանոնների իմացությունը):

• Լեռնային հատուկ պատրաստության հիմունքներ՝ 10-րդ եւ 11-րդ դասարաններ (ապահովում է լեռնային ռելիեֆի, լեռնային վտանգների եւ դրանք հաղթահարելու եղանակների իմացությունը):

• Կապ եւ տեղեկատվական անվտանգություն՝ 11-րդ եւ 12-րդ դասարաններ (ապահովում է ժամանակակից

մարտական գործողությունների ընթացքում կապի եւ հեռահաղորդակցության ձեւերի, միջոցների իմացությունը, պատկերացում է տալիս ՀՀ ՁՈՒ-ում տեղեկատվական անվտանգության հիմնախնդրի, ռազմական ոլորտի պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին):

• Հոգեբանական պատրաստություն՝ 8-12-րդ դասարաններ (ապահովում է հասարակական գիտակցություն, արժեքներ, վարքականոն, զինվորական կոլեկտիվում միջանձնային կոնֆլիկտների պատճառների եւ դրանից ելող վտանգների մասին իմացությունը եւ դրանց հաղթահարման ուղիները, արտակարգ իրավիճակներում զգուշության, զգոնության, ուշադրության ձեւավորումը եւ տազնապի հաղթահարումը):

ՆՁՊ առարկան զարգացնում է երիտասարդների որոշակի կարողություններ ու ձեւավորում հմտություններ՝ հստակ գործելու այնպիսի ծայրահեղ իրավիճակներում, ինչպիսիք են՝ մարտական գործողությունները կամ արտակարգ այլ իրավիճակներ: Նման պատրաստությունը, նախնական փորձի շնորհիվ ձեռք բերած գիտելիքները հնարավորություն են տալիս սովորողներին հոգեբանորեն պատրաստ լինել արտակարգ իրավիճակներին, բարդ իրադրությունում ոչ միայն պահպանել սեփական կյանքն ու առողջությունը, այլեւ արագ ու արդյունավետ իրականացնել մարտական կամ այլ առաջադրանքներ: ՆՁՊ առարկայի ուսուցումը ուղղված է նաեւ հատուկ վարժանքներով սովորողների բարոյահոգեբանական հատկանիշների ձեւավորմանն ու ուժեղացմանը (հայրենասիրություն, կարգապահություն, պատասխանատվություն, ինքնավստահություն, կոլեկտիվիզմ), որոշակի ունակությունների զարգացմանը եւ նոր կարողությունների

առաջացմանը (ֆիզիկական ունակություններ, ֆիզիոլոգիական հատկանիշներ, հիշողության, ուշադրության կենտրոնացում ու փոխատեղում, վերլուծական մտածողություն):

Ցածր դասարաններում ավելի շատ ուշադրություն է դարձվում անհատական պատրաստությանը, իսկ բարձր դասարաններում՝ խմբային (ջոկային) պատրաստվածությանը: Կարելի է ջոկի անդամների փոխգործողությունը:

Դաշտային (ճամբարային) պարավունքներ: Այս պարավունքները հնարավորություն են տալիս իրականին մոտ պայմաններում մատուցել նյութը, ցուցադրել պահանջվող գործողությունները, իսկ սովորողներին՝ գործնական վարժանքներով յուրացնել թեման: Բացի երկարաժամկետ ճամբարային փորձաշրջանից՝ նպատակահարմար է կազմակերպել կիրակի օրերին՝ աշակերտների եւ ծնողների համաձայնությամբ, դպրոցի ղեկավարության հետ համաձայնեցված: Ճամբարային պայմանները առավել մեծ հնարավորություններ են ստեղծում պարավունքներն անցկացնել ինչպես ցերեկային, այնպես էլ երեկոյան ժամերին, ուսուցանել առանձին թեմաներ («Կողմնորոշում աստղերով», «Տեղաշարժ մթնային մեջ», «Պահակային ծառայության անցկացում», «Քողարկված կրակատեղի պատրաստում» եւ այլն): Ճամբարային պատրաստության եւ ռազմամարզական խաղերի ընթացքում կարող են լուծվել հետեւյալ խնդիրները՝ բնական միջավայրում տեսական գիտելիքների փորձնական ստուգում եւ ամրապնդում, հմտությունների եւ կարողությունների զարգացում անհատական եւ խմբային վարժանքներով, իրավիճակների մոդելավորում եւ իրական պայմաններում սովորողների խմբային համագործակցության զարգացում, հոգեբանական կայունության ապահովում, սեփական ունակությունները ճանաչելու եւ ինքնադրսեւորվելու հնարավորություն:

Գործունե խմբային համագործակցության զարգացում, հոգեբանական կայունության ապահովում, սեփական ունակությունները ճանաչելու եւ ինքնադրսեւորվելու հնարավորություն:

«Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների ռազմամարզական ճամբարի կարգը» արդեն ներկայացվել է հանրային քննարկման/հղում: Ճամբարի ծրագիրը համարվում է ՆՁՊ առարկայի 8-րդ, 9-րդ, 10-րդ եւ 11-րդ դասարանների առարկայական ծրագրի գործնական եւ կիրառական մասը:

Շեֆ-գործուսուցիչներ: Սա հնարավորություն է տալիս սովորողներին անմիջականորեն ծանոթանալ բանակային առօրյային, մարտական տեխնիկային, սպառազինության տեսակներին եւ անձնակազմի մարտական պարավունքներին:

Արտադասարանական խմբակների կազմակերպումը: Շատ արդյունավետ է դպրոցներում արտադասարանական «Պատանի հետախույզ», «Պատանի լեռնագնաց» եւ այլ խմբակների ձեւավորումը, որոնք հնարավորություն են տալիս ապահովել կարգապահություն եւ ինտենսիվ ուսուցում:

Ներառական կրթությունը «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շրջանակում կազմակերպվում է՝ լինելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների շահերից, ֆիզիկական եւ մտավոր ընդունակություններից ու կարողություններից:

ՆՁՊ առարկայի ուսուցումն իրականացվում է տղաների եւ աղջիկների համար հավասարապես:

Յ. ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ



Բուհական գիտություն

Որակի հսկման եւ մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոն

Երեւանի պետական համալսարանում կզործի ժամանակակից սարքավորումներով համալրված Դեղապատրաստուկների որակի հսկման եւ մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոն, որը կարող է տարածաշրջանում իրականացնել կրթական, խորհրդատվական եւ արտադրական օրինակելի ծառայություններ՝ ֆարմացիայի եւ դրան հարակից մասնագիտական ոլորտներում:

Կենտրոնի ստեղծումը եւ դրա հենքի վրա դեղանյութերի կառուցվածքային հետազոտությունների ու դեղերի որակի հսկման, գնահատման նոր մագիստրոսական ծրագրի ներդրումը կնպաստեն ոլորտի հիմնարար եւ կիրառական հետազոտությունների արդիականացմանը, ինչպես նաեւ միջազգային չափանիշներին համապատասխան դեղագետ-վերլուծաբան մասնագետների պատրաստմանը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի ներկայացուցիչներն այցելել են բուհ՝ Հայաստանի բարձրագույն կրթության «Նորարարությունների մրցակցային հիմնադրամի» դրամաշնորհային ընթացիկ ծրագրի մշտադիտարկման նպատակով: Աշխատանքային խումբը շրջել է բուհի կողմից վերանորոգված եւ լաբորատորիայի համար նախատեսված տարածքում, որը համալրվել է ծրագրով նախատեսված լաբորատոր կահույքով եւ գերժամանակակից վերլուծական սարքավորումների երկու խմբաբաժանով: Շրջայցի շրջանակում աշխատանքային խմբի անդամները դրամաշնորհային ծրագրի անձնակազմի հետ քննարկել են ծրագրի ժամանակացույցով նախատեսված գործողությունները եւ դրանց իրականացման ընթացքը: Դրամաշնորհային ծրագրի ղեկավար,

քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Սադյանը նշել է, որ գերժամանակակից վերլուծական սարքավորումների մյուս խմբաբաժանի մատակարարումը կիրականացվի ծրագրի հաջորդ փուլի ընթացքում: Միաժամանակ բուհը ոչ գումարային ներդրումների շրջանակում տրամադրել է նաեւ լաբորատոր սարքավորումներ ու համակարգչային տեխնիկա: Ընթացքում են «Դեղերի որակի հսկում եւ գնահատում» մագիստրոսական նոր ծրագրի հաստատման աշխատանքները:

Նշվել է, որ ծրագրի շրջանակում պայմանագրեր են կնքվել տեղական դեղագործական եւ հարակից մասնագիտական կազմակերպությունների, հետազոտական կենտրոնների հետ: Արդյունավետ համագործակցություն է ծավալվում ոլորտի գիտահետազոտական եւ դեղագործական այնպիսի ընկերությունների հետ,

ինչպիսիք են ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը, «ԱՐՓԻՍԵԴ» եւ «ԼԻԲՎՈՐ» դեղագործական ընկերությունները, «Դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը» եւ ՌԴ Բելգորոդի պետական հետազոտական համալսարանը:

Այցի ընթացքում դիտարկվել է նաեւ արդեն իսկ ձեռք բերված լաբորատոր սարքավորումների համապատասխանությունը պայմանագրով սահմանված չափանիշներին, ինչպես նաեւ քննարկվել են դրանց կիրառության հետ կապված մի շարք հարցեր:

Հանդիպման ավարտին պատասխանատուները հավաստիացրել են, որ կենտրոնի զարգացման ռազմավարությունը, ինչպես նաեւ կայքը մշակման փուլում են:

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ուսումնագիտափորձարարական նոր լաբորատոր բազա

Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանում կզործի «Տրանսպորտային ուղիների շինարարություն եւ շահագործում» արդիական ուսումնագիտափորձարարական լաբորատոր բազա, որը միտված կլինի բուհի կարողությունների հզորացմանը:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է նաեւ «Տրանսպորտային ուղիների շինարարություն եւ շահագործում» մագիստրոսական կրթական ծրագրի մասնագիտական դասընթացների թվայնացում՝ Moodle էլեկտրոնային հարթակի կիրառմամբ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի ներկայացուցիչներն այցելել են բուհ՝ Հայաստանի բարձրագույն կրթության «Նորարարությունների մրցակցային հիմնադրամի» դրամաշնորհային ընթացիկ ծրագրի մշտադիտարկման նպատակով:

Աշխատանքային խումբը շրջել է դրամաշնորհային ծրագրի շրջանակում ստեղծվելիք լաբորատորիայի համար առանձնացված համապատասխան տարածքներում, որոնք արդեն իսկ ամբողջովին վերանորոգվել էին, եւ տեղադրվել են համակարգչային, լաբորատոր սարքավորումներ ու հարմարանքներ: Խմբի անդամները դիտարկել են ձեռք բերված պարագաների համապատասխանությունը պայմանագրով սահմանված պայմաններին, ինչպես նաեւ քննարկել ուսումնական եւ հետազոտական գործընթացում դրանց կիրառությանն առնչվող մի շարք հարցեր ու ծրագրի ժամանակացույցով նախատեսված գործողությունները:

Բուհի դրամաշնորհային ծրագրի ղեկավար Վարազդատ Հովհաննիսյանը փաստել է, որ շինարարությանն առնչվող բազում խնդիրներ փորձարարական լուծում են պահանջում:

«Սա գիտություն է, որը չի կարող բավարարվել միայն լսարաններում

տեսական հիմնավորումներ կատարելով», - նշել է նա՝ հավաստիացնելով, որ ստեղծվող ենթակառուցվածքներում ակտիվորեն կիրականացվեն այնպիսի աշխատանքներ, որոնց արդյունքում հնարավոր է ստանալ հետագա առելուրայնացման ներուժ ունեցող կարելու գիտական նորություններ:

Նշվել է, որ ԵՇՀԱՀ-ի դրամաշնորհային ծրագրի այս փուլում իրականացվել է ընթացքում է «Ավտոճանապարհների շինարարություն» ու «Կամուրջներ եւ տրանսպորտային թունելներ» մասնագիտացումների գծով կրթության բովանդակության բարելավումը՝ նոր լաբորատոր աշխատանքների ձեւակերպման ու փորձարկման, դասընթացների ծրագրերի եւ ուսումնամեթոդական գրականության մշակման ու ներդրման միջոցով:

Մասնավորապես՝ ընտրված անհատ խորհրդատուներն ավարտել են երկու ձեռնարկների եւ երեք ուղեցույցների մշակման աշխատանքները, ինչպես

նաեւ ամփոփվել են «Տրանսպորտային ուղիների շինարարություն եւ շահագործում» կրթական ծրագրում ընդգրկված մասնագիտական դասընթացների՝ Moodle էլեկտրոնային հարթակի կիրառմամբ թվայնացման նպատակով անհատ խորհրդատուների ընտրության մրցույթների արդյունքները:

Հավելենք, որ լաբորատորիայի ստեղծումը կնպաստի տրանսպորտային ուղիների շինարարության եւ շահագործման ոլորտի հիմնարար եւ կիրառական հետազոտությունների արդիականացմանը, թույլ կտա շինարարական եւ դրանք վերահսկող կազմակերպությունների հետ իրականացնել տեխնիկական համագործակցություն ինչպես նրանց անհրաժեշտ նոր մշակումների կատարման, այնպես էլ կիրառվող շինանյութերի, կոնստրուկցիաների ու կոնստրուկտիվ լուծումների փորձաքննությունների անցկացման ոլորտներում:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մշակույթ

Թատերահամերգային տարածքների տրամադրման կարգ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է թատերահամերգային գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տարածքներում երրորդ անձանց ծառայությունների մատուցման կարգը:

Նորմատիվ իրավական ակտով սահմանվում է, թե թատերահամերգային գործունեություն իրականացնող կազմակերպություններն ինչ ընթացակարգով, որ դեպքերում, ինչ տեսակի ծառայությունների մատուցման նպատակով կարող են իրենց դահլիճները եւ այլ տարածքները տրամադրել երրորդ անձանց: Ըստ այդմ՝ երրորդ անձանց համար մատուցվող ծառայությունները պետք է համահունչ լինեն թատերահամերգային կազմակերպության կանոնադրական նպատակներին, չպետք է խաթարեն նրա բնականոն գործունեությունը

կամ խախտեն խաղացանկը:

Իրավական ակտով սահմանվել է ծառայությունների մատուցման մեկ օրվա սակագնի հաշվարկման բանաձեւը, որը կազմված է մի քանի բաղադրիչներից: Մասնավորապես՝ հաշվի են առնված տարածքի ամսական վարձակալության գնահատված արժեքը՝ հիմնված համապատասխան որակավորում ունեցող անկախ գնահատողի եզրակացության վրա, տարածքի սարքավորումների օգտագործման արժեքը, որը որոշվում է դրանց հաշվեկշռային արժեքի 10 տոկոսը հարաբերելով տարվա օրերի թվի՝ 365-ի վրա, ինչպես նաեւ տարածքի պահպանման ծախսերը (կոմունալ եւ կապի վճարումներ, անվտանգության ծառայության եւ այլն): Առանձին բաղադրիչ է դիտարկվում նաեւ ծառայությունների մատուցման գործընթացում ընդ-

գրված աշխատողների ամսական հաշվարկային աշխատավարձի մեծությունը (դիցուք՝ դահլիճի մաքրության, լուսավորման համակարգի վրա աշխատող մասնագետների աշխատավարձը):

Համաձայն կարգի՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող եւ ԿԳՄՍ նախարարության միջնորդությամբ իրականացվող կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառումների համար սահմանվում է 0,5-ից 1, իսկ այլ աղբյուրներից ֆինանսավորվող միջոցառումների համար՝ նվազագույնը 1,2 գործակիցները, որոնք կիրառվում են մեկ 1 օրվա սակագնի նկատմամբ: Սակագները մինչեւ 2021 թվականի ապրիլի 1-ը կհաստատվեն թատերահամերգային գործունեություն իրականացնող կազմակերպությունների ղեկավարների հրամաններով՝ համաձայնեցնելով

նախարարության հետ: Մինչ այդ կզործի ծառայությունների մատուցման ՀՀ մշակույթի նախարարի՝ 2017 թվականի մայիսի 2-ի N 246-Ա հրամանով սահմանված կարգը:

Պայմանագիր՝ ըստ օրինակելի ձեւի Ըստ կարգի՝ թատերահամերգային կազմակերպությունը երրորդ անձի հետ կնքում է պայմանագիր, որի համար պարտավոր է պատվիրատուից պահանջել միջոցառման սցենարը կամ ծրագիրը (այն համարվելու է ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը): Հեն կարող իրականացվել այնպիսի միջոցառումներ, որոնց ընթացքում կարող են խախտվել ՀՀ Սահմանադրության եւ իրավական այլ ակտերի պահանջները: Կարգի հավելվածով հաստատվել է նաեւ պայմանագրի օրինակելի ձեւը:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Գիտաժողով

«Յայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին»

Երեւանի Խ. Աբովյանի անվան Յայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի մեծ դահլիճում (Ալեք Մանուկյան 13) փետրվարի 8-ին տեղի ունեցավ «Յայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին» խորագրով գիտաժողովի հանդիսավոր մեկնարկը: Գիտաժողովը ՀՀ ԳԱԱ պատմության եւ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտների հետ համատեղ կազմակերպել էր եւ բարձր մակարդակով անցկացրեց ՀՊՄՅ-ի «Յայաստանը 1920-1991 թթ.» գիտական լաբորատորիան:

Լիագումար նիստում բացման խոսքով հանդես եկավ ՀՊՄՅ-ի ռեկտոր, պրոֆեսոր **Ռուբեն Միրզախանյանը**: Հիմնավորելով իր տեսակետը՝ նա ընդգծեց, որ 1939–1945 թթ. ընթացած Երկրորդ համաշխարհային պատերազմի վճռորոշ հատվածը՝ ԽՍՀՄ ժողովուրդների մղած Յայրենական Սեծ պատերազմը (1941–1945 թթ.), հայ ժողովրդի համար եւս եղել է հայրենական պատերազմ, քանզի հայը պաշտպանել է իր հայրենիքը՝ Խորհրդային Յայաստանը: Պրոֆեսոր Ռ. Միրզախանյանը մասնավորապես նշեց, որ «1941–1945 թթ. պատերազմը մեզ համար իսկապես հայրենական էր. հայ ժողովուրդը պատերազմի ընթացքում թուրքական հրոսակախմբերի՝ արդեն իսկ ծրագրված հարձակումից պաշտպանում էր Խորհրդային պետության մաս կազմող իր հայրենիքը՝ Յայաստանը: Յայ-թուրքական սահմանին կենտրոնացված էին այդ պետության 25 դիվիզիաներ, որոնք պատրաստ էին հատել սահմանը եւ իրականացնել նոր եղանակ, ավելի սուսկալի, ավելի ողբերգական՝ իր հետեւանքներով: Պատերազմը Սեծ հայրենական էր մեր ժողովրդի համար, քանզի, ինչպես 20-րդ դարում, այնպես էլ մեր ողջ պատմության ընթացքում մենք՝ հայերս, չենք ունեցել ժողովրդի զանգվածային այնպիսի մասնակցություն ռազմական գործողություններին եւ թիկունքի ապահովման աշխատանքներին, ինչպես 1941–1945 թվականներին: Այսօր Երկրորդ համաշխարհային պատերազմում մեր ժողովրդի մասնակցության մասին պատմագիտական ուսումնասիրություններն ավելի քան արդիական են. գիտաժողովը կոչված է որոշ չափով լրացնելու այդ բացը»: Ռեկտորը եւս մեկ անգամ արձանագրեց, որ Երկրորդ հանրապետության շրջանում տարբեր դիրքորոշում ունեցող իշխանությունների օրոք, հայ ժողովուրդն ունեցել է եւ ունի մեծագույն հարգանքի արժանի պատմական հիշողության դրսեւորում դեպի Սեծ հայրենականի հիշատակը հավերժացնող փառքի հուշարձանները, որոնք վեր են խոյանում մեր Յանրապետության մեծ ու փոքր հազարավոր բնակավայրերում:

Այնուհետեւ ողջույնի խոսքով հանդես եկավ Յայաստանում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան **Սերգեյ Կոպիրկինը**: ՀՀ-ում ՌԴ դիվանագիտական ներկայացուցչության գլխավոր պաշտոնյան իր խոսքում գիտաժողովը հետպատերազմյան ժամանակահատվածում անցկացնելը խորհրդանշական համարեց եւ անդրադարձավ Խորհրդային Միության դեմ հիտլերյան Գերմանիայի սանձազերծած Երկրորդ աշխարհամարտի չնռաջվող պատմության դասերին: Դեսպան Սերգեյ Կոպիրկինը հակաֆաշիստական պայքարում առանձնակի կարեւորեց հայ ժողովրդի մասնակցությունը, արժեւորեց նրա ռազմական տաղանդի եւ սխրանքի դրսեւորումներն ու հատկապես ավանդը հաղթանակի մեջ: Սերգեյ Կոպիրկինն արդյունավետ աշխատանք մաղթեց գիտաժողովի մասնակիցներին եւ իր ելույթն ամփոփելով՝ նշեց. «Այսօր խնդիր է դրված պաշտպանել ոչ միայն հայրենիքի սահմանները, այլեւ պատմությունը: Ով չի հիշում պատմությունը, նա ունի մռայլ ապագա: Մեր հայրերի ու պապերի սխրանքը պարտավորեցնում է՝ չթողնել, որ կրկնվի այդ ողբերգությունը»:

Յայաստանում Բելառուսի Յանրապետության դեսպանության խորհրդական **Վյաչեսլավ Լիսուխան**, խոսելով Երկրորդ աշխարհամարտի պատերազմական գործողությունների ու արիավիրքի մասին, անդրադարձավ պարտիզանական շարժմանը, մի շարք ռազմական գործողություններում հայերի կարեւոր մասնակցությանը: Նա ընդգծեց Բելառուսի ազատագրման համար մարտերը ղեկավարած հայ զորավարների, մասնավորապես՝ ԽՍՀՄ մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Յովհաննես Բաղդասյանի սխրանքը, ապա հավելեց, որ գիտաժողովի թեման հատկապես արդիական է, ուստի եւ պատմության վերարժեւորումը՝ կարեւոր:

Լիագումար նիստին «Յայրորդների մասնակցությունը հակաֆաշիստական դիմադրական շարժմանը Ֆրանսիայում Երկրորդ աշխարհամարտի տարիներին (1939–1945 թթ.)» զեկույցով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Աշոտ Մելքոնյանը**: Նա ընդգծեց, որ Միսաք Մանուշյանը եւ բազմաթիվ այլ հայորդիներ (Բարդուղ Պետրոսյան, Լեւոն Տիտանյան, Ալեքսանդր Ղազարյան եւ այլք), որոնց թիվը հասնում է մի քանի հազարի, հավաքագրվեցին հանում Ֆրանսիայի ազատագրության եւ ունեցան իրենց մեծագույն ավանդը ֆաշիզմի դեմ պատմական հաղթանակում:

Ընդմիջումից հետո գիտաժողովի աշխատանքները միաժամանակ ընթացան երկու տարբեր բաժանմունքներում:



Գիտաժողովի մասնակիցներին հանձնելի անակնկալ մատուցեց ՀՊՄՅ-ն՝ նրանց նվիրելով գիտաժողովին ներկայացված զեկույցումները՝ հողվածի տեսքով ամփոփված մեկ ժողովածուի մեջ: Գիտաժողովում ներկայացված զեկույցումները թեմատիկ առումով առնչվում էին գիտաժողովի խորագրին եւ նվիրված էին հիշյալ ժամանակաշրջանի պատմության առանձին դրվագների եւ իրադարձությունների լուսաբանմանը: Գիտաժողովին ներկայացված եւ հողվածների ժողովածուի մեջ ընդգրկված էին հետեւյալ շահեկան ու հետաքրքիր զեկույցումները. «Իրադրությունը խորհրդա-թուրքական սահմանին Յայրենական Սեծ պատերազմի առաջին փուլում 1941–1942 թթ.» (Ամատուցի Վիրաբյան, պատմական գիտությունների դոկտոր, ՀՊՄՅ թանգարանագիտության, գրադարանագիտության եւ մատենագիտության ամբիոնի վարիչ), «Յերոսական գյուղը՝ զորականների դարբնոց» (Արամ Սիմոնյան, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), «Յայուհիների մասնակցությունը Յայրենական Սեծ պատերազմի մարտական գործողություններին» (Եղիկ Սիմոնյան, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր), «Սեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության ներդրումը Երկրորդ աշխարհամարտում տարած հաղթանակում» (Եղգար Յովհաննիսյան, ՀՊՄՅ պատմության եւ հասարակագիտության ֆակուլտետի դեկան), «Ապարանի շրջանը Յայրենական Սեծ պատերազմի տարիներին» (Տիգրան Պետրոսյան, ՀՊՄՅ գիտական գրադարանի տնօրեն), «Խորհրդային Յայաստանում Յայրենական Սեծ պատերազմի տարիների դասալիքների խնդիր շուրջ» (Արման Մարտիրոսյան, ՀՊՄՅ հայոց պատմության ամբիոնի դոցենտ), «Յայկական պետական մանկավարժական ինստիտուտի մասնակցությունը Յայրենական Սեծ պատերազմին» (Արմինե Եփրիկյան, ՀՊՄՅ հայոց պատմության ամբիոնի դոցենտ), «Ծագումով շուշեցի ԽՍՀՄ հայ հերոսները» (Արման Մալոյան, «Եվրոպական համալսարան հիմնադրամ»-ի Իջեւանի մասնաճյուղի դասախոս), «Յայաստանի ազգային գրադարանը Երկրորդ աշխարհամարտի տարիներին (ըստ Յայաստանի ազգային արխիվի փաստաթղթերի)» (Մհեր Ղազինյան, ՀԱԳ, գրադարանագիտության եւ տեղեկատու մատենագիտության ենթաբաժնի վարիչ), «Երկրորդ աշխարհամարտի տարիներին Սիմոն Վրացյանի գործունեությունից» (Խաչատուր Ստեփանյան, ՀՊՄՅ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր), «Երկրորդ աշխարհամարտի հայ ռազմագերիները եւ նրանց ճակատագիրը» (Աշոտ Յայրոնի, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր), «ԽՍՀՄ քաղաքացիների տարիանունը Ստալինոպոլի երկրամասում 1941 թ. երկրորդ կեսին –1942 թ., մարդկանց հարմարվելու եւ հաստատվելու հիմնախնդիրները» (Իգոր Կրյուչկով, Նատալյա Կրյուչկովա, Յուսիսկոպոսյան դաշնային համալսարան, ՌԴ), «Եգիպտահայ գրող, հասարակական գործիչ, իրապարակախոս, երգիծանկարիչ Գառնիկ Սվազյանի գործունեությունը Երկրորդ աշխարհամարտի տարիներին» (Վերոնիկե Սվազյան, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ), «Յայաստանի ազգային արխիվի կինոֆոտո փաստաթղթերը Յայրենական Սեծ պատերազմի մասին» (Ավագ Յարությունյան, ՀԱԱ կինոֆոտո փաստաթղթերի մասնաճյուղի վարիչ), «Միացյալ Նահանգների պետքարտուղարության արխիվային փաստաթղթերը 1945–1946 թթ. ԽՍՀՄ – Թուրքիա հարաբերություններում ծագած ճգնաժամի մասին» (Քրիստինե Մելքոնյան, ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի գիտաշխատող), «ԱՄՆ-ի հայերը Երկրորդ աշխարհամարտի տարիներին» (Քնարիկ Ավագյան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող), «Յայոց եկեղեցին Յոկոնդերյան հեղափոխությունից մինչեւ Յայրենական Սեծ պատերազմն ընկած ժամանակաշրջանում» (Վահրամ Կարապետյան, Երեւանում «Դոմ Մոսկվի» ՄՍԳԿ-ի գլխավոր տնօրեն):

Գիտաժողովում ներկայացված զեկույցումներով մասնակիցները մեկ անգամ եւս մեծարեցին Երկրորդ աշխարհամարտի մասնակից մեր հայրենակիցներին ու արժեւորեցին հայ ժողովրդի ավանդը ֆաշիստական Գերմանիայի եւ միլիտարիստական ճապոնիայի դեմ տարած պատմական հաղթանակի կերտման գործում:

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտությունների
թեկնածու





Դիմանկար

Արտակարգ պայմաններում՝ երկու ոսուցիչների աշխատանքի մասին

Գայանե Սիմոնյանը եւ **Լուսինե Ավագյանը** ԿԳՄՍ նախարարության կազմակերպած՝ «Տարվա լավագույնները» մրցույթի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում հավաքելով ամենաբարձր միավորը՝ արժանացել են հաղթողի կոչմանը: Մրցույթին նրանք ներկայացրել են «Արտակարգ իրավիճակներում (նոր կորոնավիրուսով պայմանավորված) աշակերտների ուսումնական գործընթացի շարունակականության ապահովումը» ծրագիրը, որը կազմված է ինչպես անհատական, այնպես էլ համատեղ հեռավար դասընթացներից: Գայանեի վարած դասընթացներում Լուսինեն ներգրավվել է որպես դիտորդ-խորհրդատու ուսուցիչ եւ հակառակը:

Գայանե Սիմոնյանն աշխատում է Կոտայքի մարզի Ակունքի միջնակարգ, իսկ Լուսինե Ավագյանը՝ Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցում: Գայանեն պատմում է, որ երկու անգամ՝ 2014 եւ 2016 թթ.-ին մասնակցել է «Լավագույն ուսուցիչ» մրցույթին, որը, ըստ նրա, չունի այս տարի առաջին անգամ անցկացված «Տարվա լավագույնները» մրցույթի թափանցիկությունը: «Մեզ շատ դուր եկավ այս ձեռնաչափը, երբ անհատական կամ խմբային եղանակով ուսուցիչները ներկայացնում էին իրենց ծրագրերը: Այս մրցույթի ընթացքում դու ազատ էիր ու կախված չէիր, օրինակ, տնօրենի նախընտրություններից եւ մարզային վարչությունների կամայականությունից: Մրցութային հանձնաժողովը համեմատում էր ներկայացված բոլոր ծրագրերը եւ ընտրում լավագույնին, ինչը, իր անաձայնեք, հրաշալի է», -մրցույթի մասին իր տպավորություններով կիսվում է Գայանեն:

Մեզ հետ զրույցում ծրագրի հեղինակները պատմում են, թե ինչպես առաջացավ նման նախագիծ ունենալու միտքը: «Դեռեւս 2017 թվականին մենք մասնակցեցինք Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի իրականացրած՝ «Հեռավար ուսուցում կազմակերպելու հնարավորություններ» դասընթացին, որտեղ մեզ սովորեցնում էին՝ ինչպես moodle համակարգում դասընթաց ստեղծել: Իսկ արդեն 2018թ. եւ 2019թ. ԿՏԱԿ-ի «Հեռավար ուսուցում» համակարգում ինքներս ստեղծեցինք եւ վարեցինք դասընթացներ ուսուցիչների համար, որոնց մասնակցում էին տարբեր մարզերի ուսուցիչներ: Իսկ մինչ այդ, 2013 թվականից եւ Լուսինեն ստեղծել է ԿՏԱԿ-ի Հայկական կրթական միջավայրի «Պաշարների շտեմարանում» տեղադրել էինք բազմաթիվ շնորհանդեսներ, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս ուսուցման գործընթացը դարձնել ավելի հետաքրքիր եւ ինտերակտիվ: Մեր տեղադրած ցուցադրումները, բաց դասերի պլաները եւ այլ նյութեր օգտագործում են հանրապետության շատ ուսուցիչներ: Անհամեստ չհնչի, բայց մեզ բոլորը ճանաչում են՝ շնորհիվ մեր ստեղծած ուսումնական նյութերի եւ տարբեր հանդիպումների ընթացքում ասում, որ օգտագործում են դրանք: ՏՀՏ գործիքներին տիրապետելու մեր օրինակը վարակիչ դարձավ՝ սկզբում մեր դպրոցներում, հետո ամբողջ հանրապետությունում: Այսինքն՝ մեր ձեռքը միշտ եղել է նորարարության գարկերակի վրա», -ասում է Գայանեն:

Լուսինեի խոսքով՝ ծրագրի միտքն առաջացել է COVID-19 համավարակի շրջանում, երբ հասկացել են, որ իրենց տեսադասերը



եւ դասընթացներ կարող ենք օգտագործել նաեւ աշակերտների համար: «2020 թ. մարտ-ապրիլ ամիսներին ԿՏԱԿ-ի «Հեռավար ուսուցման համակարգում» ստեղծել եւ վարել ենք դասընթացներ՝ մեր տարբեր դասարանների աշակերտների համար: Այդ ընթացքում մենք հետեւել եւ վերահսկել ենք մասնակիցներից յուրաքանչյուրի անհատական հաշվետվությունների էջը՝ ունենալով մշտական տեղեկատվություն նրա ակտիվության, գործունեության, դիտումների եւ առաջադրանքների կատարման վերաբերյալ: Յուրաքանչյուր սովորող հնարավորություն է ունեցել մուտք գործել դասընթաց օրվա իրեն հարմար ժամանակահատվածում եւ ներկայացված նյութերի ուսումնասիրությանն ու յուրաքանչյուր տրամադրել այնքան ժամանակ, որքան իրեն անհրաժեշտ է», -նշում է Լուսինեն եւ հավելում, որ այսպիսով՝ արտակարգ իրավիճակում սովորողների համար ապահովվել են կրթություն ստանալու հավասար պայմաններ:

2020 թվականի օգոստոսին Գայանեն եւ Լուսինեն ԿՏԱԿ-ից առաջարկ ստացան «Հեռավար ուսուցման համակարգում» մշակել եւ իրականացնել հեռավար դասընթաց այն դպրոցների համար, որտեղ մաթեմատիկայի ուսուցիչ չկա: Այդ նպատակով Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոցի 5-6-րդ դասարանների «Մաթեմատիկա» առարկայի համար նրանք պատրաստել են ամբողջական հեռավար դասընթաց՝ ներառելով իրենց հեղինակած ցուցադրությունները, տեսադասերը եւ այլ լրացուցիչ ուսումնառածանդակ էլեկտրոնային նյութեր ու իրականացրել եւ շարունակում են հեռավար ձևով դասավանդում: Ուսուցիչները նախատեսում են մյուս ուստարվա ընթացքում եւս Անտառամեջի միջնակարգ դպրոցում շարունակել դասընթացը ու ստեղծել արդեն 7-8-րդ դասարանների «Հանրահաշիվ» եւ «Երկրաչափություն» առարկաների ամբողջական հեռավար դասընթացներ: Նրանք պնդում են, որ իրենց դասընթացների ժամանակ աշակերտներն ավելի մոտիվացված են լինում, քանի որ նյութը մատուցվում է ինտերակտիվ շնորհանդեսի միջոցով, մաթեմատիկական խնդիրներին լուծում է տրվում տարբեր հետաքրքիր եղանակներով: «Հեռավար ուսուցումը հանդիսանում է արտակարգ իրավիճակներում կրթության շարունակականությունն ապահովող ներկայումս գոյություն ունեցող ամենարդյունավետ միջոցը: Այդպիսի եզրահանգման ենք եկել՝ հաշվի առնելով մեր սեփական դիտարկումները, սովորողների եւ ծնողների դրական արձագանքները, ինչպես նաեւ

գործընկերների մասնագիտական կարծիքը: Համոզված ենք, որ ուսուցիչ եւ աշակերտի՝ առջանց գործիքների ու ՏՀՏ միջոցների օգտագործումը շեշտակիորեն բարձրացնում են թեմայի յուրացման աստիճանը, ուսումնառությունը դարձնում ավելի հետաքրքիր եւ խթանում սովորողների ակտիվ գործունեությունը: Հետեւաբար, կարելի էր ենք ուսուցիչների եւ սովորողների շրջանում համապատասխան հարթակներում ներգրավվածության ընդլայնումը, աշխատելու փորձի եւ հմտությունների ձեռք բերումը, ինչպես նաեւ այդ հարթակների առավելություններն արժեւորելու եւ դրանցում գրագետ գործունեություն ծավալելու մշակույթի ձեւավորումը», -վստահեցնում են մեր զրուցակիցները:

Նրանց խոսքով՝ ծրագրի շարունակականությունն ապահովելու, առավել լայն շրջանակների ընդգրկելու եւ փորձի փոխանակման արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծվել են համագործակցային քարտեզներ, որոնք ներառում են դպրոցներ՝ ՀՀ տարբեր մարզերից, Արցախի Հանրապետությունից եւ եվրոպական տարբեր երկրներից: Բացի այդ՝ ստեղծվել է էլեկտրոնային ռեսուրսների առջանց գրադարան, որում ներառված են 5-12-րդ դասարանների համար նախատեսված զանազան ռեսուրսներ:

«Ես գիտեմ, որ սա իմ աշխատանքն է, եւ բնավ նշանակություն չունի՝ որքան են վարձատրվում դրա դիմաց: Համոզված եմ՝ ուսուցիչն աշխատում է այնպես, ինչպես կարողանում է՝ իր ուժերի ներածին չափով: Շատ կցանկանայի, որ ուսուցիչների վերապատաստումները լինեին առավել նպատակային: Մեր օրերում շատերն են իրենց սեփական նախաձեռնությամբ մասնակցում տարբեր կազմակերպությունների կամ անհատների իրականացրած վերապատրաստումների, ստանում հավաստագրեր: Դա շատ ողջունելի է, սակայն ցանկալի է, որ ԿԳՄՍ նախարարությունը վերահսկի վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների կողմից անցկացվող դասընթացների որակը», -ասում է Գայանեն:

Նշենք, որ «Տարվա լավագույնները» մրցույթին ներկայացվել էր 53 հայտ, որից 35-ը՝ անհատական, իսկ 18-ը՝ խմբային: «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում հաղթող էր ճանաչվել 33 ծրագիր, որի առաջին հորիզոնականում հենց տեղ էր գտել մեր հերոսների ներկայացրած ծրագիրը:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կեցության վարձավճարի փոխհատուցում

սկիզբը՝ էջ 3

Ծրագրից օգտվել ցանկացող ուսանողների թիվը նախարարության եւ «Ձեթուն ուսանողական ավան» միջեւ կնքված պայմանագրով նախատեսված թվից ավելի լինելու դեպքում առաջնահերթությունը որոշվում է՝ հետեւյալ հերթականությամբ.

- ծրագրից արդեն օգտվող ուսանողներ,
- միջպետական համաձայնագրերի շրջանակում ուսումնառող ուսանողներ,
- ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող բուհերի ուսանողներ,
- առավել հեռավոր փաստացի բնակության վայր ունեցող ուսանողներ:


Ծրագրից արդեն օգտվող ուսանողներին կարելի է ցանկից հանել հետեւյալ դեպքերում.

- ուսանողը կորցրել է ուսանողի իր կարգավիճակը,
- ուսանողն ունի ավելի քան երեք ամսվա վարձավճարի կամ կոմունալ վճարների կեսամս ցարտավորություն,
- ուսանողը, կազմակերպության ներքին կարգապահական կանոնների համաձայն, զրկվել է կեցության ծառայություններից,
- ուսանողը հրաժարվել է կազմակերպության ծառայություններից:

Նշենք, որ կեցության վարձավճարը «Ձեթուն ուսանողական ավան» հիմնադրամում մեկ ուսանողի համար հաշվարկվում է տարեկան 110 հազար դրամի չափով՝ չհաշված սենյակի էլեկտրականության վճարը:

Համաձայն դրամաշնորհային մրցույթի պահանջի եւ ԿԳՄՍ նախարարության հետ կնքված պայմանագրի՝ մարզաբնակ եւ օտարերկրյա ուսանողները կարող են դիմել «Ձեթուն ուսանողական ավան» հիմնադրամ՝ ներկայացնելով ուսումնառության փաստը հավաստող տեղեկանք՝ տրված բուհի կողմից, ինչպես նաեւ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող համապատասխան փաստաթղթեր:

4. ՍԱՆՈՒԿՅԱՆ



Բանաստեղծներն են հուշում...

Կիզբը՝ էջ 8

Ողնաշարավորների արյունը վառ կարմիր է, երբ հեմոգլոբինը հարուստ է թթվածնով, եւ մուգ կարմիր, երբ թթվածնով հարուստ չէ:

Արյունը լայնորեն օգտագործվել է արվեստում, Ֆ. Նիցշեի, Իստվան Կանտորի, Լենինի Լիի, Լուկաս Աբելայի, Կիրա Օ'Րեիլի ելույթների ժամանակ, Անդրես Սերանոյի լուսանկարներում: Մարկ Քուլինը պատրաստել է քանդակ՝ օգտագործելով սառած արյունը: Օգտագործել է իր սեփական արյունը, պատրաստել է իր գլխի ձեւով:

Հայերենը շատ թեւավոր խոսքեր ու արտահայտություններ ունի «արյուն» բառով կազմված: Այսպես, օրինակ, «արյունը եռակ»՝ մեծ, անսպառ եռանդ ունենալ, «արյունը աչքն առնել»՝ կյանքը մահվան վտանգի ենթարկել, «արյունը քաղցր»՝ համակրանք, սեր առաջացնել եւ այլն:

Սկարուն (մախորդ էջում)՝ Պ. Ռուբենս, «Յուսերի կռիվը ամազոնուհիների հետ», բարոկկո ոճ, աշխատանք փայտի վրա: Սյուժեի հիմքում էպիկական լեգենդն է՝ դրվագ հույների ու տրոյացիների արյունալի պատերազմից: Ամեն մի ֆրագմենտ արտացոլում է յուրաքանչյուր մարմնի փառահեղությունը: Աշխատանքն արված է լույսի ու ստվերի անկրկնելի տեխնիկայով: Այդտեղ հույների լիակատար հաղթանակն է ու ամազոնուհիների սողամարդկային դիմադրությունը:



Իսկ ներշնչանքը փոխաբերորեն՝ հոգեկան ուժերի շարժ է, որն առաջ է գալիս ստեղծագործության գործընթացում, հաջողության հասնելիս ու նաեւ հակադիր իրավիճակներում՝ հուսահատության, ընկճախտի ժամանակ: Ոգեշնչված վիճակում մարդն ինքն իրեն ներշնչում է վստահությամբ, սեփական ուժերի նկատմամբ հավատ, դրական հույզեր: Նման վիճակ է առաջանում, օրինակ, անսպասելիորեն մոր միտք հղանալիս, երբ «ինտուիտիվ փայլատակումը» ոգեշնչում է արարումների:

... Սկարուն՝ քանդակագործ Ռոբին Ուայթի գործերից: Ձեր շնչառությունը չի՞ արագանում նրա՝ ոգեշնչման պահին ստեղծած հեքիաթային այս փերիին նայելիս: Վարպետն օգտագործել է սովորական մետաղալար, ու այն վերածվել է նրբագեղ աղջկա:

54) Առազաստ

«Մեզով պատած ծովի վերա կապուտակ Առազաստն է ահա լողում մեն ու մենակ... Ի՞նչ է փնտրում նա այն հեռու վայրերում, Ի՞նչ է թողել նա հայրենի աշխարհում»
Սիխայի ԼԵՐՍՈՆՏՈՎ

«Եզրին արդյոք կլինի՞ քամի, Որ առաջ մղի իմ առազաստը»:
Պարույր ՍԵՎԱԿ



Առազաստը նավի կայմին ամրացված հատուկ ձեւով կարված ամուր կտոր է, որ քանու ուժով ուռչում է եւ առաջ է մղում նավը: Կտրվածքով առազաստը հիշեցնում է թռչնի թև. հավանաբար, բնությունից վերցված մի հայտնագործություն, որի տեսքը թույլ է տալիս զարգացնել ամենամեծ օգտակար ուժ: Օղը, շրջա-հոսելով առազաստը, նրա մի կողմում ստեղծում է բարձր ճնշում եւ հրող ուժ, իսկ փոխելով քանու նկատմամբ առազաստի անկյունը՝ ղեկորդը առազաստանավի շարժման համար կարող է օգտագործել նաեւ կողմնային ճնշումը: Որ-

պեսզի առազաստանավն ընթանա անհրաժեշտ ուղղությամբ, նավաստիները փոխում են առազաստների փոխադարձ դիրքը, եւ քամին սահում է դրանց մակերեսով: Ոլորածն շարժվելու շնորհիվ առազաստանավն ի վիճակի է ընթանալ նաեւ թույլ քամուն հակառակ:

Առազաստանավերը հայտնի էին դեռեւս 5500 տարի առաջ՝ եգիպտոսում, Չինաստանում, Փյունիկիայում: Բուռն զարգացում են ապրել 9-14-րդ դարերում, սկզբում՝ Միջերկրական ծովի մերձափնյա երկրներում, այդ թվում՝ Կիլիկիայում, այնուհետեւ՝ Անգլիայում, Հոլանդիայում եւ այլուր:

Առազաստ հասկացություն կա նաեւ ճարտարապետության մեջ. դա եռանկյունի գնդածե կամար է, որի վրա բարձրանում է քառանկյունի նախագծված շենքի գմբեթը: Այդպիսին է, օրինակ, Արթիկի շրջանի Նոր Կյանք գյուղի եկեղեցու (6-7-րդ դարեր) հորինվածքը:

Առազաստ է կոչվում նաեւ երկնակամարի հարավային կիսագնդի մի համաստեղությունը, որի «հարեւաններն» են Ող-նուցն ու Նավախեյը:

... Սկարուն՝ «Կիլիկիա» առազաստանավը, որ հայերը կառուցել են 13-րդ դարում, իսկ մեր օրերում վերստեղծեցին «Այաս» ակունքի խանդավառ մարդիկ: Նրանք ամբողջովին կրկնեցին հին նավերին՝ սկսած ընդհանուր տեսքից մինչեւ ամենամիտքը ձեւավորումը: Ու ճանապարհորդեցին ծովերով՝ կրկնելով նույնիսկ անձնակազմի հագուստները...

55) Կարոտ

«Կա մի աշխարհ մեր աշխարհում՝ հնձ հարազատ, ձեզ անծանոթ, Ուր էլ լինեն՝ կանչում է նա հազար ձայնով ու սրտագին, Ապրում է նա իմ հոգու մեջ իբրեւ անբառ, համր կարոտ, Իբրեւ լեզենդ դեռ չգրված, իբրեւ մի երգ անսրբագիր»:
Պարույր ՍԵՎԱԿ

«Կռունկ, ուստի՞ կուզաս, ծառա եմ ձայնիդ, Կռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս»:
Սա ուշ միջնադարի անհայտ հայ հեղինակի կարոտախոսի երգ է: Նրա մեղեդին, որպես ժողովրդական արվեստի կատարյալ ցուց, համաաշխարհային ճանաչում ունի: Մեծն Կոմիտասն այն մշակել է ձայնի ու դաշնամուրի համար:

Կարոտը մարդու զգացողությունն է, որ նա զգում է մեկից կամ մի բանից զուրկ, հեռու լինելու պատճառով: Դա նաեւ թախիծ է, տխրություն, անգամ՝ վիշտ ու տառապանք: Կարոտի տեսական զգացումից նաեւ հիվանդություն է ծագում՝ տոչորվող ու կարոտակեզ անձը կորցնում է հոգեկան անդորրը եւ հյուծվում:

Չոգեբանորեն՝ կարոտը մի ընկճախտային վիճակ է, որի ժամանակ անձը նվազագույն ուշադրություն է դարձնում ներկա հնարավորություններին եւ կենտրոնանում անցյալի հիշողությունների կամ ապագայի տեսլականների վրա: Դա ձգտում է՝ վերադարձնել այն քաղցր ակնթարթները, որ մնացել են անցյալում: Բայց կարոտը նաեւ լուսավոր զգացողություն է՝ կյանքի իմաստի ըմբռնողականության, անցնելիք ճանապարհների հետ միավորված:



Լուսավոր թախիծը ռեսուրսային վիճակ է. ես սպասում եմ մոր ապագայի, ես ձգտում եմ դրան, անում եմ հնարավորը՝ դրան հասնելու համար: Ռոմանտիկ երազային անձը կարոտում է բարի ու գեղեցիկ աշխարհը, որտեղ իղձերը իրականություն են դառնում: Բայց մինչ ռոմանտիկը երազում է, իրապաշտն այն կառուցում է: Ժամանակն անցյալը ապագային միացնող սլաք է, ու երջանկությունը պետք է կառուցել նրա ընթացքի մեջ:

Հայ ժողովրդի ճակատագիրը, նրա ջերմ ու բարեկամասեր բնույթը, հայրենագրկվելը, իր որդիների՝ անընդհատ պանդխտության մեկնելը առանձնահատուկ «կարոտախոսի» նկարագիր են հարդորել նրա հավաքական կերպարին:

«Կա մի իրական ու հրաշք երկիր, որ չես գտնի աշխարհի ոչ մի քարտեզի վրա: Արեւագալի տեսարաններն այնտեղ ավելի դյուբիչ են, ու նրա լեռներում այսօր էլ դեռ արեւորդիների պաշտամունքների բյուրեղագարանյա հսկա վկաներ ու ժայռապատկերներ կան: Թանձր կաթնագույն մշուշի միջից՝ փրփուր դարձած ջրվեժի տեսիլք ու շառաչ կա այնտեղ, ու սարերից իջնող, արդեն մի ողջ դար տիրոջ փնտրող ցողախառն զեփյուռ կա այնտեղ: Անտառի հառաչը ամեն օր վազում է սարերն ի վեր այդ երկրում, իր վիշտն հասկացող զրուցակից է փնտրում՝ տեսած արիավիրքը նրան պատմելու եւ փոքր-ինչ սփոփվելու համար, բայց չգտնելով՝ ձորերն է իջնում ու Մհերի դռան քարանձավում պահվում:

...Այդ երկրի անունը Էրզիր է: Ես այն միայն իմ երագներում եմ տեսել, որ եկել, խառնվել են տատիս երագներին ու դարձել հիշողություն ու արյան կանչ, կարոտ ու լուռ աղաղակ...» (Արփի-Նե, «Իմ մեծ տատի լեզենդը», «Գարուն», №9/10, 2010թ.):

Հուզիչ է Ֆրունզե Դովլաթյանի «Կարոտ» ֆիլմը՝ Հրաչյա Քոչարի համանուն վիպակի մոտիվներով: Արեւմտյան Հայաստանից գաղթած Առաքելին տանջում է հայրենի եզերքի կարոտը: Նա խախտում է Թուրքիայի հետ սահմանը՝ հարազատ վայրերում արեւածագը դիմա-վորելու համար:

...Սկարուն՝ Ջոն Ուիլյամ Գոդվարդ, «Կարոտ», 1904թ.:

(շարունակելի)

Ջարուհի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Շիրակի մարզի Արթիկի հ. 3 ավագ դպրոցի ուսուցչուհի, բնագետ

Արդա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Շիրակի մարզի Արթիկի հ. 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի, բանասեր

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Դավարիկի Հ. Հովհաննիսյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկա-տուրայի ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝ - դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի, - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), - անձը հաստատող փաստաթուղթ, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքուկի պատճենը՝ (առկայության դեպքում), - ինքնակենսագրություն (Չե 5), - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքուկ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա մարտի 19-ին՝ ժամը 14:00-ին, Արմավիրի մարզի Դավարիկի Հ. Հովհաննիսյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 92-83-62 հեռախոսահամարով:

Մեկնարկել է «Կենզուրու 2021» մրցույթի առցանց գրանցումը

ԿԵՆԳՈՒՐՈՒ 2021
ԳՐԱՆՑՈՒՄԸ ԲԱՑ Է
ԿԵՆԶՈՒՐՈՒ 2021
ԳՐԱՆՑՈՒՄԸ ԲԱՑ Է
ԿԵՆԶՈՒՐՈՒ 2021
ԳՐԱՆՑՈՒՄԸ ԲԱՑ Է

Ուրախ ենք տեղեկացնելու, որ «Կենզուրու 2021» մրցույթը տեղի կունենա մարտի 21-ին, «Այբ»-ի մրցույթների առցանց հարթակում: «Կենզուրու 2021» առցանց մրցույթի համար մեր հարթակում գրանցումն արդեն սկսվել է:

Գրանցման վերջնաժամկետն է մարտի 17-ը: Գրանցվելու համար անհրաժեշտ է մտնել test.contests.am, սեղմել «Գրանցվել» կոճակը, ընտրել համապատասխան տողը և լրացնել դաշտերը:


Դպրոցական զանգվածային մրցույթների մեր առցանց հարթակը ստեղծվել է Uteach-ի թիմի աջակցությամբ: Մասնակցության վճարն այս տարի կարող եք կատարել միանգամից նշված հարթակում՝ մեր նոր գործընկերոջ՝ «Թել-Սել» ընկերության Telcell Wallet էլեկտրոնային դրամապանակի միջոցով՝ առանց տնից դուրս գալու և հերթեր կանգնելու: Այս դեպքում մասնակիցները կտրոններ ներկայացնելու անհրաժեշտություն չեն ունենա:

Խնդրում ենք առցանց հարթակում տվյալները լրացնել առանց վրիպակների, հատկապես էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը, քանի որ հետո պետք է գրանցումը հաստատել ձեր գրանցված հեռախոսահամարից: Որեւէ տեղ պահպանեք գրանցման էլ. հասցեն և զաղտնաբառը, որպեսզի չմոռանաք և չկորցնեք:

Ավելի հասանելի, ավելի փորձված, ավելի մասնակցային. սրանք են «Կենզուրու 2021»-ի մեր նպատակները: 21-րդ դարը թվանշային է, հետեւաբար մաթեմատիկան՝ շատ կարեւոր: Այսօր ամբողջ աշխարհն է անցել կրթության նոր ձևերի, այդ թվում՝ «Այբ» կրթական հիմնադրամը՝ մեր երեխաների կրթությունն ավելի ճկուն, ժամանակի պահանջներին համահունչ և բոլորին հասանելի դարձնելու նպատակով:

Մասնակցե՛ք մաթեմատիկայի մրցույթին:

Տեղեկատվական հովանավոր՝ «Կրթություն» շաբաթաթերթ



«Կրթություն» շաբաթաթերթ բաժանորդագրվելու համար դիմեք մոտակա փոստային բաժանմունքներին:



Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Կիրանցի Գ. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկա-տուրայի (14 դասաժամ), տեխնոլոգիայի (4, տղամերի խումբ) ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝ - դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի, - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), - անձը հաստատող փաստաթուղթ, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքուկի պատճենը՝ (առկայության դեպքում), - ինքնակենսագրություն (Չե 5), - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքուկ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա մարտի 19-ին՝ ժամը 14:00-ին, Տավուշի մարզի «Կիրանցի Գ. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Տավուշի մարզ. գ. Կրանց, 1-ին փողոց, շենք 22: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 97-94-94 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Քանաքեռավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիայի (14 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝ - դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի, - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), - անձը հաստատող փաստաթուղթ, - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքուկի պատճենը՝ (առկայության դեպքում), - ինքնակենսագրություն (Չե 5), - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքուկ, - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա մարտի 19-ին՝ ժամը 13:00-ին, Կոտայքի մարզի Քանաքեռավանի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Կոտայքի մարզ, գ. Քանաքեռավան, 11-րդ փողոց, շենք 5: Տեղեկությունների համար զանգահարել՝ (0224) 6-00-39 կամ (096) 19-95-55 հեռախոսահամարներով:

Գրանցման վկայական՝ 01U-049349, Տրված է՝ 11.01.2001թ.
Դասիչ՝ 69312,
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 67,
E-mail: krtutun@yandex.ru
Դեռ. (043) 57 49 56, (043) 57 49 51
Խմբագրությունը ստացված թղթակցությունները և նամակները չի գրախոսում և ետ չի վերադարձնում:
Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում:
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը պարտադիր է:
Տպագրված է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» հրատարակչության տպարանում:
Տպաքանակը՝ 2000:
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 02.03.2021թ.
Գինը՝ 200 դրամ:
Համարի պատասխանատու՝
Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ